ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պող 1
+374 12 88 88 88
info@liga.am
www.liga.am


«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՍԱԼԻ ԾԱԾԿՈՒՅԹ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐԻՑ




## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺԶՆՆՈՒՄ | ԴԵՂՈՐԱՅՔ ԵՎ ԱՅԼ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
| ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ | ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ | ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ |
| ՄՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ | ՈՂՆԱՇԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ | ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ |
| ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ | ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՊՏԻԿԱ | ՕՆԿՈԼՈԳԻԱ |

## ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 24/7 Կոնտակտ-կենտրոն
- 24/7 պրակտիկ բժիշկ հանդիսացող փորձագետի աջակցում
- Բոլոր գործարքների թվային հասանելիություն բջջային հավելվածով
- Համագործակցող բուժհաստատությունների լայն ցանց Երևանում և մարզերում
- Բուժհաստատությունների անսահմանափակ ընտրություն
- Չհատուցվող որոշ ծառայությունների համար զեղչեր


TÜV AUSTRIA CERTIFIED
TÜVRheinland CERTIFIED
ISO/IEC 27001:2013 Management System
www.tuv.com ID 9108645522

## 1. ԾՐԱԳՐԵՐ

Բոլոր ծառայություններն ենթակա են հատուցման Ծրագրերով սահմանված ապահովագրական գումարի և/կամ տվյալ ծառայության համար սահմանված սահմանաչափի ներքո:

Ծրագրերով նախատեսված ծառայություններն ենթակա են հատուցման Առողջության կամավոր ապահովագրության պայմանագրի ներքո ապահովագրված յուրաքանչյուր անձին, եթե մատուցվել են ապահովագրության պայմանագրով ապահովագրված անձի ապահովագրության գործողության ժամկետում:

Ծրագրերում ընդգրկված ցանկացած ծառայություն, եթե մատուցվում է քրոնիկ հիվանդության կամ վիճակի համար, հատուցվում է այդ ծառայության և քրոնիկ վիճակների համար նախատեսված կարգավորումների համաձայն:

Բժշկական ծառայությունները, նշանակված դեղորայքը կամ ախտորոշիչ հետազոտությունները հատուցվում են միայն այն հիվանդությունների կապակցությամբ, որոնք ներառված են Ծրագրերում:

Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

| ԾՐԱԳՐԵՐ | ԿՈՄՖՈՐՏ + | ԱՄԲՈՒԼԱՏՈՐ + |
|---|---|---|
| **ՏԱՐԵԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ** | **֏ 3,000,000** | **֏ 4,000,000** |

| ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ | | |
|---|---|---|
| Շտապ օգնության խմբի շուրջօրյա այց | Հատուցվում է | Հատուցվում է |
| Բժշկի առաջնային զննում, նախնական ախտորոշում | | |
| Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումներ | | |
| Հիվանդի տեղափոխում Բժշկական հաստատություն առանձնակի դեպքերում, երբ անհրաժեշտ է հատուկ կահավորված սանիտարական տրանսպորտ և անհրաժեշտ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի ուղեկցություն | | |
| **ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ** | | |
| Տնային կանչ[1] | Չի հատուցվում | Հատուցվում է |
| Խորհրդատվություն | Չի հատուցվում | Հատուցվում է |
| **Գործիքային հետազոտություններ**<br>• **Ռենտգենաբանական հետազոտություններ՝** Դենսիտոմետրիա, Համակարգչային տոմոգրաֆիա, Հիստերոսալպինգոգրաֆիա, Մամոգրաֆիա, ՊԷՏ Կոմպյուտերային տոմոգրաֆիա, Ռենտգենոգրաֆիա, Ռենտգենոսկոպիա, Սցինտիգրաֆիա<br>• **Ուլտրաձայնային հետազոտություններ՝** Դոպլեր, Դուպլեքս, Էխոէնցեֆալոգրաֆիա, Էխոսրտագրություն, Նեյրոսոնոգրաֆիա, Ուլտրաձայնային, Սթրես էխոսրտագրություն, Տանսէզոֆագեալ էխոսրտագրություն<br>• **Էնդոսկոպիկ հետազոտություններ՝** Բրոնխոսկոպիա, Գաստրոսկոպիա, Լարինգոսկոպիա, Կոլոնոսկոպիա, Հիստերոսկոպիա, Ռեկտոսկոպիա, Ֆիբրոսկոպիա, Կոլպոսկոպիա<br>• **Մագնիսառեզոնանսային հետազոտություն**<br>• **Ֆունկցիոնալ հետազոտություններ՝** B scan, Ակնահատակի նկարահանում, ԱՇՖ/արտաքին շնչառության ֆունկցիայի որոշում, Աուդիոմետրիա, Աչքի տոնոմետրիա, Ապիրատի | Չի հատուցվում | Հատուցվում է |

[1] Բժշկի տնային կանչը Ապահովագրողի կողմից կազմակերպվում է Երևան քաղաքի տարածքում, իսկ մարզերում կազմակերպվում է համապատասխան հնարավորության առկայության դեպքում:

| | | |
|---|---|---|
| վերցնում, Ավտոռեֆրակտոմետրիա, Բիոպսիա, Զարկերակային ճնշման 24-ժամյա մոնիթորինգ, Էլեկտրանեյրոմիոգրաֆիա, Էլեկտրաէնցեֆալոգրաֆիա, Էխոբիոմետրիա A scan, Էխոպախիմետրիա, ԷՍԳ, Իմպեդանսոմետրիա, Կեռատոտոպոգրաֆիա, Համակարգչային պերիմետրիա, Հոլթեր քննություն, Ուրոֆլումետրիա, Պախիմետրիա, Պունկցիա, ՍՌՎՍ քննություն, Տրեդմիլ հետազոտություն, Օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա | | |
| **Լաբորատոր հետազոտություններ**<br>• Բիոքիմիական<br>• Իմունաբանական<br>• Իմունոհիստոքիմիական<br>• Կլինիկական<br>• Հյուսվածքաբանական<br>• Հորմոնալ<br>• Մանրէաբանական<br>• Շճաբանական<br>• Ցիտոլոգիական | Չի հատուցվում | Հատուցվում է |
| **Կոնսերվատիվ և վիրահատական բուժում**<br>• Թերապիա<br>• Ընդհանուր վիրաբուժություն<br>• Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր կամ դրանց համակցում) բուժում<br>• Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում<br>• Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում<br>• Թունավորման բուժում | Չի հատուցվում | Հատուցվում է |
| Պատվաստումներ արտասահման մեկնելու համար ՀՀ-ում պատվաստանյութի առկայության դեպքում | Հատուցվում է | Հատուցվում է |
| **ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ** | | |
| Հիվանդասենյակ | Օրական<br>֏ 20,000 սահմաններում | Օրական<br>֏ 30,000 սահմաններում |
| **ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ** | | |
| Սրացումներ | Չի հատուցվում | Հատուցվում է |
| Բացահայտմանն ուղղված խորհրդատվություններ և հետազոտություններ, մշտական, պահպանողական բուժում և դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ[2] | Չի հատուցվում | ֏ 50,000 սահմաններում |
| **ՀՂԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄ** | | |
| Հղիության հսկողություն<br>Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում<br>Հղիության ընդհատում<br>Վիտամինաթերապիա՝ ներառյալ վիտամիններ հանդիսացող կենսաբանական ակտիվ հավելումները | ֏ 80,000 սահմաններում | ֏ 150,000 սահմաններում է |

[2] Նոր ապահովագրված ընտանիքի անդամների համար գործում է 12 ամիս սպասման ժամկետ*:

* **Սպասման ժամկետը** սկսվում է պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից կամ պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած նոր անձի ընդգրկման պահից: Ցանկացած ծախս, կապված համապատասխան կետով նախատեսված հիվանդությունների կամ բժշկական միջամտությունների հետ, հատուցման ենթակա չէ սահմանված սպասման ժամկետում:

| Հիվանդասենյակ հետծննդյան շրջանում՝ առավելագույնը 10 օր | Օրական<br>֏ 20,000 սահմաններում | Օրական<br>֏ 30,000 սահմաններում |
|---|---|---|
| **ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ**[3] | | |
| Օպտիկա (ապակիներ, լինզաներ, շրջանակներ) | ֏ 20,000 սահմաններում | ֏ 30,000 սահմաններում |
| Զեղչ աչքի էքսիմեր լազերային վիրաբուժության համար<br>• «Սլավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ<br>• «Նատալի Ֆարմ» ՍՊԸ (Աստղիկ Բժշկական Կենտրոն) | 25% զեղչ | 25% զեղչ |
| • «ՎԻԺՆՄԵԴ» ՍՊԸ | 20% զեղչ | 20% զեղչ |
| **ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ**[4] | | |
| **Հետազոտություններ**<br>• Ռենտգենաբանական<br>• Օրթոպանտոմոգրամա<br>• Ատամնաշարի համակարգչային տոմոգրաֆիա<br>**Թերապիա**<br>• Կարիեսի և/կամ նրա բարդությունների բուժում<br>• Ուղիների մշակում<br>• Պլոմբավորում լուսակարծրացնող պլոմբանյութով<br>**Վիրաբուժություն**<br>• Պարզ հեռացում<br>• Բարդ հեռացում<br>• Իմաստության ատամի հեռացում<br>**Լնդերի բուժում**<br>• Պարադոնտիտ<br>• Գինգիվիտ<br>**Պրոֆիլակտիկա**<br>• Ատամնաքարերի մաքրում<br>• Փայլեցում | ֏ 40,000 սահմաններում | ֏ 60,000 սահմաններում |
| **Օրթոպեդիա**<br>• Կերամիկական շապիկներ<br>• Ատամնաբուժական պրոթեզավորում<br>• Անկերային բույթերի օգտագործում | Չի հատուցվում | |
| **Զեղչ իմպլանտացիա ծառայության վիրաբուժական փուլի և օրթոպեդիկ ցիրկոնե պսակի յուրաքանչյուր տեղադրման համար** Ապահովագրողի կողմից ընտրված ատամնաբուժական կենտրոնում:[5] | 20% զեղչ | 20% զեղչ |
| **ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ. 16-65 տարեկան*** | | |
| **Խորհրդատվություններ**<br>• Թերապևտի խորհրդատվություն<br>• Ակնաբույժի խորհրդատվություն (տեսողության ստուգում)<br>• Կանանց համար գինեկոլոգի խորհրդատվություն կամ տղամարդկանց համար ուրոլոգի խորհրդատվություն<br>**Գործիքային Հետազոտություններ**<br>• Որովայնի խոռոչի ՈՒԶՀ<br>• Փոքր կոնքի օրգանների ՈՒԶՀ | 1 անգամ | 1 անգամ |

---

[3] Բացառություն են հանդիսանում՝ կոսմետիկ նպատակներով կատարվող վիրահատությունները, տեսողական արատներն ուղղելու նպատակով իրականացվողվիրահատությունները:

[4] Բացառություն են հանդիսանում էսթետիկ բուժման, փորձարարական մեթոդների և կոսմետիկ ատամնաբուժության ծախսերը: Եթե Ապահովագրված անձը չի բուժվում Ապահովագրողի կողմից նշված ատամնաբուժական կենտրոնում, ապա Ապահովագրողի պահանջով պետք է անցնի հետբուժական հետազոտություն Ապահովագրողի կողմից նշված ատամնաբուժական կենտրոնում:

[5] Զեղչը չի տարածվում հավելյալ և/կամ օժանդակ ծառայությունների վրա:

| | | |
|---|---|---|
| • Վահանաձև գեղձի ՈՒՁՀ<br>• Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ)<br>• Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, բժշկի նշանակման դեպքում՝ մամոգրաֆիական հետազոտություն<br>**Լաբորատոր Հետազոտություններ**<br>• Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով<br>• PAP թեստ 30 տարեկանից բարձր կանանց համար<br>• PSA թեստ 45 տարեկանից բարձր տղամարդկանց համար<br>• Լիպիդային պրոֆիլ | | |
| * Կանխարգելիչ բուժզննումը, Ապահովագրված անձի ընտրությամբ, իրականացվում է ստորև նշված բժշկական հաստատություններից մեկում: Պայմանագրի գործողության ընթացքում ներքոնշյալ ցանկը կարող է փոփոխվել:<br>✓ «Նաիրի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ<br>✓ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ (Աստղիկ Բժշկական Կենտրոն)<br>✓ «Սիրմեդ» ՍՊԸ<br>✓ «Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան» հիմնադրամ («Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր)<br>✓ «Կանարդ» ՍՊԸ (Դավիդյանց Պոլիկլինիկա)<br>✓ «Սլավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ<br>✓ «Դիալաբ» (Կլինիկական Ախտորոշիչ Լաբորատորիա)<br>✓ «Արմենիա» Հանրապետական Բժշկական Կենտրոն ՓԲԸ<br>✓ «Մեփլ Լիֆս» Հայ-Կանադական Բժշկական Կլինիկա<br>✓ «Բեգլարյան Կենտրոն» ՓԲԸ<br>✓ «Թիվ 8 Պոլիկլինիկա» ՓԲԸ | | |
| ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ. 0-15 տարեկան | | |
| Իրականացվում է Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում | | |
| **Խորհրդատվություններ**<br>• Մանկաբույժի խորհրդատվություն<br>• Մանկաբույժի ցուցման դեպքում ակնաբույժի խորհրդատվություն (տեսողության ստուգում)<br>• Մանկաբույժի ցուցման դեպքում նյարդաբանի խորհրդատվություն<br>**Գործիքային Հետազոտություններ**<br>• Որովայնի խոռոչի ՈՒՁՀ<br>**Լաբորատոր Հետազոտություններ**<br>• Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով<br>• Մանկաբույժի ցուցման դեպքում մեզի ընդհանուր քննություն | 1 անգամ | 1 անգամ |
| ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| **Հայտերի կարգավորմանն աջակցող առանձնացված մասնագետ** | Տրամադրվում է | Տրամադրվում է |
| **Ֆիզիոթերապիա***<br>• Գերբարձր հաճախականության թերապիա<br>• Էլեկտրաֆորեզ<br>• Կրիոթերապիա<br>• Հարված-ալիքային թերապիա<br>• Մագնիսաթերապիա<br>• Ուլտրաձայնային թերապիա<br>• Ֆոնոֆորեզ<br>• Էլեկտրաստիմուլյացիա<br>**Լազերաթերապիա**<br>**Կինեզոթերապիա** | Չի հատուցվում | ֏ 50,000 սահմաններում |
| **Բուժական մերսում***<br>**Ասեղնաբուժություն*** | Չի հատուցվում | ֏ 50,000 սահմաններում |
| *Սահմանաչափը գործում է և՛ սուր, և՛ ոչ սուր դեպքերում: | | |

| | | |
|---|---|---|
| **Երկրորդ կարծիք**<br>Եթե Ապահովագրված անձը համաձայն չէ բժշկի/մասնագետի եզրակացության հետ, նա՝ իր հաշվին, կարող է անցնել 2-րդ հետազոտությունը և ստանալ 2-րդ բժշկի/մասնագետի եզրակացությունը: Եթե, արդյունքում, վերոհիշյալ երկու բժշկի/մասնագետի եզրակացություններն ամբողջությամբ տարբերվում են միմյանցից, Ապահովագրողն՝ իր հաշվին, իրավունք ունի պահանջել Ապահովագրված անձից անցնել 3-րդ հետազոտությունը տվյալ ոլորտում առաջատար բժշկի/մասնագետի մոտ և ստանալ վերջինիս եզրակացությունը: Եթե վերոհիշյալ 3-րդ բժշկի/մասնագետի եզրակացությունը էապես տարբերվում է 1-ին բժշկի/մասնագետի տրամադրած եզրակացությունից, բայց համապատասխանում է երկրորդ բժշկի/մասնագետի եզրակացութանը, ապա Ապահովագրողը հատուցում է 2-րդ բժշկի/մասնագետի եզրակացության հետ կապված ծախսերը: Եթե վերոհիշյալ 3-րդ բժշկի/մասնագետի եզրակացությունը էապես տարբերվում է 2-րդ բժշկի/մասնագետի տրամադրած եզրակացությունից, բայց համապատասխանում է առաջին բժշկի/մասնագետի եզրակացությանը, ապա Ապահովագրողը հատուցում չի իրականացնում Ապահովագրված անձին: | Տրամադրվում է | Տրամադրվում է |
| **Զեղչ Արտասահման մեկնողների աջակցության (ճամփորդության) ապահովագրության համար**<br>• Ապահովագրական գումար՝ 30,000 Եվրո<br>• Գործողության տարածք՝ ամբողջ աշխարհ<br>• Չհատուցվող գումար՝ չի կիրառվում<br>• Ժամկետ՝ ըստ ուղևորության օրերի | 20% զեղչ | 20% զեղչ |

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ[6]

**Ծրագրերով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և հատուցման ենթակա չեն ստորև նշված հիվանդությունները, վիճակները, դրանց հետևանքները, բարդությունները և դրանց ախտորոշման, բացահայտման ու բուժման հետ կապված բոլոր ծախսերը**

2.1. Մինչ ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն

2.2. Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

2.3. Առողջության պարտադիր ապահովագրության ծրագրով հատուցվող դեպքերը, հիվանդությունները, վիճակները

2.4. Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս: Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը

2.5. Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա

2.6. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ

2.7. Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ), ՀՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ

2.8. Ամբուլատոր բուժօգնություն, բացառությամբ Ծրագրով նախատեսված դեպքերի

2.9. Ստացիոնար բուժօգնություն, բացառությամբ Ծրագրով նախատեսված դեպքերի

2.10. Քրոնիկ հիվանդությունների բուժում, բացառությամբ Ծրագրով նախատեսված դեպքերի

2.11. ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ, սեռական օրգանների սնկային հիվանդություններ

2.12. Ճառագայթային հիվանդություն

2.13. Տուբերկուլյոզ

2.14. Հեպատիտ B, C, D և E, լյարդի ցիռոզ, քրոնիկ երիկամային անբավարարություն, պլանային հեմոդիալիզ

2.15. Շաքարային դիաբետ

2.16. Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ, այդ թվում՝ պոչուկի էպիթելային ուղիներ

2.17. Անպտղություն, սեռական ֆունկցիայի խանգարում և էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), սեռական հորմոնալ դիսֆունկցիաներ, դաշտանային ցիկլի խանգարում

2.18. Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում

2.19. Բուժխնամք

2.20. Բացիլակրություն, դիսբակտերիոզ և պարազիտակրություն

2.21. Ծրագրով չնախատեսված վերականգնողական բուժում, փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, ասեղնաբուժական ախտորոշում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, մանուալ թերապիա, էներգաինֆորմատիկա, ցուբոթերապիա, էլեկտրաասեղնաբուժություն, հիրուդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլլի մեթոդով և այլն

2.22. Ծրագրով չնախատեսված վիտամինաթերապիա, կենսաբանական ակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, կոսմետիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր

2.23. Այն ծառայությունները և բուժումը, որոնք մատուցվում են կանխարգելիչ և առողջարանային նպատակներով, կանխարգելիչ մերսում, ջրային պրոցեդուրաներ, աղիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն

2.24. Էքստրակորպորալ բուժման մեթոդներ. օզոնաթերապիա, պլազմաֆերեզ, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա

2.25. Էնդոպրոթեզավորում, բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, երբ այլ ընտրանքային բուժում չկա, էնդոպրոթեզ, օրգանների փոխպատվաստում

2.26. Պրոթեզներ, իմպլանտներ, օնիքսներ, պարույրներ, հարմարանքներ (լսողական սարքեր, հաշմանդամային սայլակներ, օրթոպեդիկ հարմարանքներ, այդ թվում՝ օրթոպեդիկ բարձ, օրթոպեդիկ ներքնակ, օրթոպեդիկ ներդիր, տակդիր, և այլն): Ստենտեր, բացառությամբ «Կորոնար զարկերակների ստենտավորում (դեղապատ և/կամ ոչ դեղապատ ստենտով)» ծառայությամբ նախատեսված դեպքերի

2.27. Պլաստիկ և կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն (ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժությունը), բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի

---

[6] Բացառությունների ցանկում առկա են կետեր, որոնց գործողությունը կախված է ընտրված Ծրագրից:

հետևանքների: Մաշկի հիվանդությունների (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) հետ կապված իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատություններ

2.28. Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, օնիխոմիկոզներ, սեբորեա, ակնե (կոռյակացան)

2.29. Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Նևրոզներ և սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետաանոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-նևրոտիկ համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ

2.30. Տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդների օգնությամբ, քաշի և խոսքի շտկում, սեռի վիրաբուժական փոփոխում

2.31. Ատամնաբուժության մեջ ցանկացած տեսակի պրոթեզավորում, պրոթեզավորման նախապատրաստում, թերմոֆիլների, անկերային բույթերի օգտագործում, օրթոդոնտիա

2.32. Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում

2.33. Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք

# 3. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ



3.1. Ապահովագրողը հնարավորություն է տալիս ապահովագրելու նաև Ապահովադրի ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամներին՝

- Մինչև 65 տարեկան ամուսին/կին
- Մինչև 21 տարեկան զավակ(ներ)
- Մինչև 65 տարեկան ծնող(ներ)

3.2. Պայմանագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի ընտանիքի անմիջական անդամները կարող են ապահովագրվել աշխատողի ապահովագրության գործողության սկզբից հետո **մեկ ամսվա ընթացքում**: Ամուսնության և երեխայի ծննդյան դեպքում ևս տրամադրվում է մեկ ամիս ժամանակ ընտանիքի նոր անդամին ապահովագրելու համար:
Ընտանիքի անդամի ապահովագրության դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու ներկայացնել ընտանեկան կապը հաստատող փաստաթուղթ:

3.3. Տարիքային խմբից կախված՝ ընտանիքի անդամների գծով ապահովագրավճարը հաշվարկվում է որպես աշխատակցի ապահովագրավճարի և հետևյալ համապատասխան գործակցի արտադրյալ.

| ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ | ԳՈՐԾԱԿԻՑ |
|---|---|
| **0-17** | **0.5** |
| **18-40** | **1** |
| **41-65** | **1.2** |

3.4. Աշխատակցի 3 և ավելի ընտանիքի անդամի միաժամանակ ապահովագրելու դեպքում յուրաքանչյուր ապահովագրվող ընտանիքի անդամի համար կիրառվում է 0.9 գործակից:

# 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

## ԵՐԵՎԱՆ

| | Բժշկական կենտրոններ | Հասցե |
|---|---|---|
| 4.1. | «Նաիրի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | Կենտրոն, Պարոնյան 21 |
| 4.2. | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ (Աստղիկ Բժշկական Կենտրոն) | Մալաթիա-Սեբաստիա, Դանիել Վարուժանի փող., շենք 28ա |
| 4.3. | «Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան» հիմնադրամ («Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր) | Կենտրոն, Աբովյան փող., 58 շենք |
| 4.4. | «Մուրացան» Հիվանդանոցային Համալիր | Էրեբունի, Մուրացանի փող., 114 շենք |
| 4.5. | «Բեգլարյան Կենտրոն» ՓԲԸ | Կենտրոն, Աբովյան փող., 56 շենք |
| 4.6. | «Արաբկիր Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ» ՍՊԸ | Արաբկիր, Մամիկոնյանց փող., 30 շենք |
| 4.7. | «Նորք-Մարաշ Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | Նորք Մարաշ, Արմենակ Արմենակյան, 13 շենք |
| 4.8. | «Արմենիա» Հանրապետական Բժշկական Կենտրոն ՓԲԸ | Աջափնյակ, Մարգարյան փող., 6 շենք |
| 4.9. | «Իզմիրլյան Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | Քանաքեռ-Զեյթուն, Ահարոնյան 6 |
| 4.10. | «Միքայելյան Վիրաբուժության Կենտրոն» ՓԲԸ | Քանաքեռ-Զեյթուն, Էզրաս Հասրաթյան փող., 9 շենք |
| 4.11. | «Վիկմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ | Արաբկիր, Կոմիտասի պող., 43/1 շենք, №1 |
| 4.12. | «Ժամանակակից Վիրաբուժության Կլինիկա» ՍՊԸ | Քանաքեռ-Զեյթուն, Դավիթ Անհաղթի փող., 13/4 շենք |
| 4.13. | «Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն» Հիմնադրամ | Կենտրոն, Մխիթար Հերացու փող., 5 շենք |
| 4.14. | «Արթմեդ» Բժշկական Վերականգնողական Կենտրոն ՓԲԸ | Քանաքեռ-Զեյթուն, Ծարավ Աղբյուրի փող., 55ա շենք |
| 4.15. | «Սլավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ | Արաբկիր, Մարշալ Բաղրամյան պող. 3-րդ նրբ., 4/2 շենք |
| 4.16. | ԱՁ «Արթուր Ավագյան Ժորժիկի» («Եվրոմեդիկա» Բժշկական Կենտրոն) | Կենտրոն, Փավստոս Բուզանդի փող., 7/12 շենք |
| 4.17. | «Սուրբ Աստվածամայր Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | Շենգավիթ, Արտաշիսյան փող., 46/1 շենք |
| 4.18. | «Միքդավ» ՍՊԸ («Դիամեդ» Բժշկական Կենտրոն) | Նոր Նորք, 7-րդ միկրոշրջան, Հունան Ավետիսյան փող., 84 շենք |
| 4.19. | «Էվա Մեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ | Արաբկիր, Կոմիտասի պողոտա 59/6 շենք, 46 տարածք |
| 4.20. | «ԷԼԻՏ-ՄԵԴ» ՍՊԸ | Արաբկիր, Հակոբ Հակոբյան փող., 3/15 շենք |
| 4.21. | «Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲԸ | Շենգավիթ, Մանանդյան փող., 9 շենք |
| 4.22. | «Մալայան» ՍՊԸ | Կենտրոն, Զորափի փող., 4/3 շենք, 1 շին |
| 4.23. | «Գեվմիկ» ՍՊԸ | Քանաքեռ-Զեյթուն, Գոգոլի փողոց, տուն 38 |
| 4.24. | «Վ.Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ | ՀՀ, Երևան, Ֆանարջյան փ., 76 շ. |
| 4.25. | «ՄՈՐ և ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՀԿ» ՓԲԸ | ՀՀ, Երևան, Մաշտոցի պողոտա, 22 շ. |
| 4.26. | «ՍԱՆԻՏԱ» ՍՊԸ ( «Տոնոյան Բժշկական կենտրոն» ) | ՀՀ, Երևան, Բագրատունյաց 2-րդ նրբ., 23 շ. |
| 4.27. | «ՄԻԲՍ» Բժշկական Կենտրոն ՍՊԸ | ՀՀ, Երևան, Բագրատունյաց փ., 1 շ. |
| 4.28. | «ԷՅ ԲԻ ՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Հր. Քոչարի փ., 27 շ., Գործ. հասցե՝ Հր. Ներսիսյան 1 |
| 4.29. | «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ | ՀՀ, Երևան, Տիտոգրադյան փ., 14 շ. |
| 4.30. | «ՄԵԴԼԱՅՆ ԿԼԻՆԻԿ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Ռոստովյան փ. , 17/1 շ. |
| 4.31. | «ԹՈՓ ՄԵԴ» ՍՊԸ (Ցենտրալ կլինիկա) | Պուշկինի փ., 56/1 շ. |
| | **Ամբուլատոր ծառայություն մատուցող բուժհաստատություններ** | **Հասցե** |
| 4.32. | «ՌՈՅԱԼ ԿԼԻՆԻԿ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Սայաթ-Նովայի թաղամաս , 8 |
| 4.33. | «Արիանա 22» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Բաղրամյան 1 փակ., 14 շ, բն.160 |
| 4.34. | «Աքսիոմեդ» ՍՊԸ (Վնասվածքաբանական-Վերականգնողական Կլինիկա) | Կենտրոն, Տերյան 3 շենք, 42 տարածք |
| 4.35. | «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ (միայն ախտորոշիչ հետազոտությունների համար ) | Կենտրոն, Աբովյան փող., 34/3 շենք |

| | | |
|---|---|---|
| 4.36. | «Գիսանե» ՍՊԸ (Դավիդյանց Լաբորատորիաներ) | ՀՀ, Երևան, 3 թղմ. , 10/3 |
| 4.37. | «ԴԱԼԻ ՄԵԴ» ՍՊԸ | Կենտրոն, Լեո փող., 1 շենք |
| 4.38. | «Դիալաբ» ՍՊԸ (Կլինիկական Ախտորոշիչ Լաբորատորիա) | Արաբկիր, Մամիկոնյանց փող., 41 շենք |
| 4.39. | «Էկոսենս» ՍՊԸ | Արաբկիր, Կոմիտասի պող., 37/1 շենք |
| 4.40. | «Էներգո Արմ» ՍՊԸ | Աջափնյակ, Հալաբյան փող., 9/7 շենք |
| 4.41. | «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ | Նորք Մարաշ, Գ. Հովսեփյան 8/2 |
| 4.42. | «Թիվ 8 Պոլիկլինիկա» ՓԲԸ | Արաբկիր, Մարշալ Բաղրամյան պող., 51ա շենք |
| 4.43. | «Կանարդ» ՍՊԸ (Դավիդյանց Պոլիկլինիկա) | Դավթաշեն, 4-րդ թաղ. 33/3 շենք |
| 4.44. | «Հիստոջեն» պաթոլոգիայի գիտագործնական կենտրոն ՍՊԸ | Արաբկիր, Ադոնցի փող., 6/1 շենք, շինություն 325 |
| 4.45. | «Մեդ Ալյանս Գրուպ» ՍՊԸ (ԷՆԱ կլինիկ) | ՀՀ, Երևան, Հ.Հակոբյան փ., 3/15 շ. |
| 4.46. | «Մեդիտեք գրուպ» ՍՊԸ | Նոր Նորք, 7-րդ զանգված, Հունան Ավետիսյանի փող., 84 շենք |
| 4.47. | «Մեփլ Լիֆս» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ | Նորք Մարաշ, Ա. Արմենակյան փող., 129/4 շենք |
| 4.48. | «Ջենոմա» ՍՊԸ ( «ԼԻՄՖ» Վերականգնողական կենտրոն) | Քանաքեռ-Զեյթուն, Տիգրանյան փող., շենք 6, 65 տարածք |
| 4.49. | «Սիրմեդ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Փավստոս Բուզանդի փ., 7 շ. |
| 4.50. | «ՍՎՍ-Մեդիքալ» ՍՊԸ (Ախտորոշիչ Կենտրոն) | ՀՀ, Երևան, Պարոնյան փ., 21 շ. |
| 4.51. | «Վալիդուս» Ախտորոշիչ Կենտրոն | ՀՀ, Երևան, Ազատության պող., 24/2 շ. |
| 4.52. | «ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» ԱՁ | ՀՀ, Երևան, Փափազյան փ., շ., 17, բն. 73 |
| 4.53. | «ՖԵՆԻՔՍ ՄԵԴ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Չաքյան փ., 6 շ. |
| 4.54. | ՀԿԽԸ «Գրացիա» Միջազգային Վերականգնողական Կենտրոն ՍՊԸ | Աջափնյակ, Աշտարակի խճուղի, 50/12 շենք |
| 4.55. | «ՎԱՐՈՒՍ ՄԵԴ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Ազատության պողոտա, 7Բ շ., բն. 44,<br>Գործ.հասցե՝ Գ. Սունդուկյան փ., 70շ. |
| 4.56. | «ԱՄԱՆՏԻՍ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Ադոնցի փ., 6/2 շ., տարածք 248 |
| | **Ատամնաբուժական կենտրոններ** | **Հասցե** |
| 4.57. | «Սմարթդենտ» ՍՊԸ («Կամար» Ատամնաբուժական կենտրոն) | Կենտրոն, Սայաթ-Նովայի պող., 26 շենք, №8, բն. 10 |
| 4.58. | «Արտ Կլասիկ Դենտ» ՍՊԸ | Նոր Նորք, Մոլդովական փող. 3/135 շենք |
| 4.59. | «Ագաթ դենթլ» ՍՊԸ | Արաբկիր, Բաղրամյան 33ա, բն. 29 |
| 4.60. | ԱՁ «Մարինե Խաչատրյան» | Արաբկիր, Հ. Հակոբյան փող., 3/2, բն. 11 |
| 4.61. | ԱՁ «Միքայել Շիրբակյան» | Կետրոն, Վարդանանց 11, բն. 23 |
| 4.62. | ԱՁ «Ժան Շահվերդյան» («Լիդեր Էֆ» Ատամնաբուժական Կենտրոնների Ցանց) | Քանաքեռ-Զեյթուն, Կարապետ Ուլնեցու փող., 31 շենք |
| 4.63. | «Էյ Ջի Էյջ Լաբորատորի» ՍՊԸ | Նոր Նորք, 1-ին միկրոշրջան, Լվովյան փող., 108/2 շենք |
| 4.64. | «Ֆատոյան» ՍՊԸ | Կենտրոն, Պարոնյան փող., 4/1 շենք (մուտքը Մաշտոցի պողոտայից՝ Փակ Շուկայի հարևանությամբ) |
| 4.65. | «Դենտեքս Դենտալ Գրուպ» ՍՊԸ | Կենտրոն, Սայաթ-Նովա փող., 21ա շենք |
| 4.66. | «Կլանսե» ՍՊԸ | Նոր Նորք, Նանսենի 3, 7 շենք |
| 4.67. | «Էլտիգ» ՍՊԸ | Կենտրոն, Աբովյան 44, 6 տարածք |
| 4.68. | «Բագամ» ՍՊԸ | Ավան, Ծարավ Աղբյուրի 55/5 շենք, 321 տարածք |
| 4.69. | «ԱԿՑԵՍ ԹՈՒ ԿԵՅՐ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն | Քանաքեռ-Զեյթուն, Պ.Սևակի փող., 5 շենք |
| 4.70. | ԱՁ «Մկրտիչ Հովհաննիսյան Արտաշեսի» (Իմպլանտ Կլինիկա) | Արաբկիր, Աղբյուր Սերոբի փող,, 7 շենք, բն. 69 |
| 4.71. | «Արսենդենտ» ՍՊԸ | Կենտրոն, Աբովյան 54 |
| 4.72. | «Մատիկյան ստոմատոլոգիական կլինիկա» ՍՊԸ | Արաբկիր, Արամ Խաչատրյան փող., 27/4 շենք |
| 4.73. | «Բեսթ Սմայլ» ՍՊԸ | Կենտրոն, Չարենց, 22, բն. 2 |
| 4.74. | «Վիտալի Օհանյան» ԱՁ | ՀՀ, Երևան, Պ. Սևակի փ., 88 շ., Գրանցման հասցե՝, Կոտայքի մարզ, գ. Առինջ 21 փ. 5/2 |

| Ակնաբուժական կենտրոններ (օպտիկայի մասնագիտացված խանութ-սրահներ) | | Հասցե |
|---|---|---|
| 4.75. | «Աչքի առողջության ինստիտուտ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Բագրևանդ թաղ., 8/1 շ. |
| 4.76. | «Ջիլֆյան Աչքի Խնամքի Կենտրոն» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Վերին Անտառային փ., 160/7 շ. |
| 4.77. | «Նոր հայացք կենտրոն» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Առնո Բաբաջանյան փ., 58/1 շ. |
| 4.78. | «ՎԻԺՆՄԵԴ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Հյուսիսային ճառագայթ թաղ. 2 |
| 4.79. | «Արմենուհի Ալեքսանյան Ստյոպայի» ԱՁ | ՀՀ, Երևան, Բաբաջանյան փ., 6 շ., բն. 35 |
| 4.80. | «ՑԻՏԱԴԵԼ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Տերյան փ. 57 շ., բն. 23, Գործ. հասցե՝ Տերյան փ. 105/1 շ. |
| 4.81. | ԱՁ Ալեքսանդր Ավագյան (Ինտեր Օպտիկ) | Կենտրոն, Թումանյան փ., 12 շենք |
| 4.82. | «Ջուլետտա Կարենի Գասպարյան» Ա/Ձ (Մայր Օպտիկ) | Կենտրոն, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 3/76 շենք |
| 4.83. | ՀՀ Օպտոմեդ կանադայի մասնաճյուղ (Աչքի Ախտորոշման Կենտրոն) | Կենտրոն, Ալեք Մանուկյան փող., 9 շենք, սեն. 102, 202, 203 |
| 4.84. | Լյումիեր օպտիկս | Կենտրոն, Խանջյան փ. 41, 1 տարածք |
| 4.85. | «Նատալի ֆարմ» ՍՊԸ (օպտիկա) | |
| Դեղատներ | | |
| 4.86. | «Նատալի ֆարմ դեղատուն» ՍՊԸ (դեղատների ցանց) | |
| 4.87. | «Գեղեոն Ռիխտեր» Դեղատուն ՀՁ ՍՊԸ (դեղատների ցանց) | |
| 4.88. | «Վիկ Ֆարմ» ՍՊԸ (դեղատների ցանց) | |
| 4.89. | «Գրանդ Ֆարմ» ՍՊԸ | |
| 4.90. | «Դոկ» ՍՊԸ | |
| 4.91. | «ԼԱՌԱՖԱՐՄ» ՍՊԸ | |
| 4.92. | «ԱՎՐՈՐԱ-ՖԱՐՄ» ՍՊԸ | |

**ՀՀ ՄԱՐԶԵՐ**

| | | |
|---|---|---|
| | **Արմավիր** | |
| 4.93. | «Վաղարշապատի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք.Էջմիածին,Սպանդարյան 1 |
| 4.94. | «Մեծամորի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Մեծամոր, 2-րդ թաղամաս, 24ա շենք |
| 4.95. | «Դյուցազն» ՍՊԸ | ՀՀ, Արմավիր, Հանրապետության փ., 21/2 շ. |
| | **Կոտայք** | |
| 4.96. | «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Հրազդան, Մ. Բաղրամյան թաղամաս., Պուրակային 32 |
| 4.97. | «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Աբովյան, Հատիսի 6 |
| | **Արարատ** | |
| 4.98. | «Արարատի Հիվանդանոց Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Արարատ, Խանջյան 59 |
| 4.99. | «Արտաշատի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 116 |
| 4.100. | «Արտ-Ստոմ» ՍՊԸ (Ատամնաբուժական Կենտրոն) | ք. Արտաշատ, Մարքսի 11ա |
| | **Արագածոտն** | |
| 4.101. | «Թալինի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Թալին, Քոթանյան 10 |
| 4.102. | «Աշտարակի Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա» ՓԲԸ | ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու 33ա |
| 4.103. | «Աշտարակի ԲԿ» ՓԲԸ | ք. Աշտարակ, Նարեկացու փող., 61 շենք |
| 4.104. | «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | ք. Ապարան, Գ. Նժդեհի փող., շենք 21 |
| | **Գեղարքունիք** | |
| 4.105. | «Սևանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Սևան, Նաիրյան փող., 169 շենք |
| 4.106. | «Քրոսս Մեդ» ՍՊԸ | ք. Գավառ, Սայադյան 2/3 |
| 4.107. | «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Մարտունի, Գետափնյա փող., 2/17 շենք |
| | **Լոռի** | |
| 4.108. | «Ստեփանավանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 1 |
| 4.109. | «Վանաձորի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 2/42 |
| 4.110. | «Սպիտակի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Սպիտակ, Երևանյան խճ. 1 |
| 4.111. | «Ալավերդու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Ալավերդի, Սայաթ-Նովայի փող., 20 շենք |

| | | |
|---|---|---|
| 4.112. | «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ | ՀՀ, Լոռի, Գրիբոյեդովի փ. , 3 շ. |
| 4.113. | «Ստեփանավանի Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա» ՓԲԸ | ք. Ստեփանավան, Հ. Մեղապարտի 13 |
| 4.114. | «Վանմեդ Բժշկա-Ստոմատոլոգիական Կենտրոն» ՓԲԸ | ք. Վանաձոր, Զաքարյան փող., 29 շենք |
| 4.115. | «Ալավերդու Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա» ՓԲԸ | ք. Ալավերդի, Ջրավազանի 2ա |
| 4.116. | Տաշիր պոլիկլինիկա («Նատալի ֆարմ» ՍՊԸ) | ՀՀ, Լոռի, Ջահուկյան փ., 8/1, Իրավ. հասցե՝ , Երևան, Կենտրոն, Աբովյան փ. 42/2 |
| | **Տավուշ** | |
| 4.117. | «Իռ-Վինգ» ՍՊԸ | ք.Դիլիջան, Գորկու փ. Սայաթ-Նովայի փող., 7/3 շենք |
| 4.118. | «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Նոյեմբերյան, Գարեգին Նժդեհի փող., 15 շենք |
| | **Սյունիք** | |
| 4.119. | «Կապանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Կապան, Մելիք-Ստեփանյան փող., 13 շենք |
| 4.120. | «Գորիսի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Գորիս, Գրիգոր Տաթևացու փող., 31 շենք |
| 4.121. | «Հայ-Ամերիկյան Դիագնոստիկ Կլինիկա» ՍՊԸ | ք. Կապան, Մ. Ստեփանյան 1 |
| 4.122. | «Վովադենտ» ՍՊԸ (Ատամնաբուժարան) | ք.Կապան, , Հունան Ավետիսյան փող., 4 շենք, բն.1 |
| 4.123. | «Ֆրանս հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայկական մ/ճ | գ. Ակներ, Խաղաղության փող., շենք 15/1 |
| | **Շիրակ** | |
| 4.124. | «Գյումրու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի փող., 3/3 շենք |
| 4.125. | «Ախուրյանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | գ. Ախուրյան, Ախուրյանի խճուղի,14 շենք |
| 4.126. | «Ստոմա-Էլիտ» ՍՊԸ (Ատամնաբուժարան) | ք. Գյումրի, Շիրակացի 61 թաղամաս.,15 շենք, բն. 2 |
| 4.127. | «Ստոմա-Ստիլ» ՍՊԸ (Ատամնաբուժարան) | ք. Գյումրի, Ռուսթավելի 39 |
| 4.128. | Ա/Ձ Սարգիս Նազարեթյան (Ատամնաբուժարան) | ք. Գյումրի, Ղանդիլյան փող., 84 շենք, բն. 25 |
| 4.129. | «Էկոսենս պլյուս» ՍՊԸ | ք. Գյումրի, Գ. Նժդեհի փող., 7/33 շենք |

* Պայմանագրի գործողության ընթացքում Համագործակցող բժշկական հաստատությունների ցանկը կարող է փոփոխվել, թարմացված ցանկը հասանելի է **ԱՅՍՏԵՂ**:
Ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու ՀՀ տարածքում գործող ցանկացած լիցենզավորված բժշկական հաստատությունում:

Համագործակցող բժշկական հաստատությունների ցանկում ընդգրկված հաստատությունում սպասարկվելու դեպքում Ապահովագրված անձն ազատվում է վճարումներ կատարելու պարտավորությունից, եթե դեպքը Ապահովագրողի կողմից հաստատվում է որպես ապահովագրական:

Համագործակցող բժշկական հաստատությունների ցանկում չընդգրկված հաստատությունում սպասարկվելու դեպքում Ապահովագրված անձը վճարումներն իրականացնում է ինքնուրույն և այնուհետև ներկայացնում բուժօգնությունը հիմնավորող վճարային և բժշկական փաստաթղթերը Ապահովագրողին: Եթե տվյալ բժշկական հաստատությունը Ապահովագրողին տրամադրի մատուցված ծառայությունների գծով հաշիվ-ապրանքագիր, ապա Ապահովագրողը այն կընդունի որպես վճարային փաստաթուղթ և ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշումը կկայացնի՝ համաձայն Ապահովագրողի **ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ** 9.2 ԿԵՏԻ:

TÜV AUSTRIA CERTIFIED EN ISO 9001 Certificate No. 20100213011450 TÜV AUSTRIA CERT GMBH
TÜVRheinland CERTIFIED ISO/IEC 27001:2013 Management System www.tuv.com ID 9108645522

## 5. ՀԱՅՏԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

**Վստահելի աջակցություն ձեր ճանապարհին**

### Հայտի կազմակերպում մեր կողմից (Ապահովագրողի կողմից)

Գրանցեք հայտ մինչև բժշկի դիմելը **012 888888** կամ **LIGA Mobile** կամ **Liga.am**

Պատասխանեք բժիշկ-փորձագետի հետադարձ զանգին, որը կարող է լինել փակ համարից, խնդրում ենք պատասխանել

Անձը հաստատող փաստաթղթով մոտեցեք և առանց վճարման սպասարկվեք **Համագործակցող բուժհաստատություններում**:
Հարցերի դեպքում զանգահարեք **060 622222**

Մենք կվճարենք բուժհաստատությանը ապահովագրական պատահարի գծով ձեզ մատուցված ծառայությունների համար

### Հայտի կազմակերպում ձեր կողմից (Ապահովագրված անձի կողմից)

Առանց մեզ տեղեկացնելու այցելեք ՀՀ ցանկացած բուժհաստատություն՝ վճարելով մատուցված ծառայությունների համար

**Հիմնավորող փաստաթղթերը**
ներկայացրեք մեզ **45 օրում՝**
**LIGA Mobile-ով** կամ **Liga.am**-ով

Ապահովագրական պատահարի գծով ծախսի փոխհատուցումը մենք կփոխանցենք ձեր բանկային հաշվին

# LIGAMobile

ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ

- ✓ Գրանցե՛ք հայտերը
- ✓ Ներկայացրե՛ք փաստաթղթերը
- ✓ Հետևե՛ք ձեր գործի ընթացքին

